«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝ «ՁՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՈՒՄ »

ԵՐԵՎԱՆԻ Հ. 50 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՆԹՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ա. ՋՈՀՐԱԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023թ.

Բովանդակություն /ցանկ/

1. Ներածություն - ……2

2. Գլուխ 1 - Ձրի նշանակությունն ու խորհուրդը բանահյուսության մեջ……..……4

3. Գլուխ 2 - Ձուրն Աստվածաշնչում……..7

4. Գլուխ 3 - Ձրի սիմվոլիկան, խորհուրդը էպոսում…….……..8

5. Եզրակացություն……...……..14

6. Օգտագործված գրականության ցանկ……...15

Ներածություն

ՆՊԱՏԱԿԸ- հայ բանահյուսության մեջ բացահայտել ջրի դերը, զորությունը, նշանակությունը (ոչ միայն կենսական նշանակությունը). բացահայտել էպոսի մեջ ջրի խորհուրդը, աշակերտների մոտ դյուցազնավեպը կարդալու մոտիվացիա ստեղծել՝ էպոսի նորանոր շերտեր բացահայտելու նպատակով…

«Անմահական ջուր» և «անտակ ծով» բանաձևային կապակցությունները առավել կայուն են հայկական բանահյուսության մեջ:

Ես ընտրել եմ ժողովրդական բանահյուսությունից մեզ հայտնի, երբեմն ենթագիտակցորեն ընկալվող «ջուր» բառը («անմահական ջուր, բուժիչ ջուր») և կփորձեմ տալ վերջինիս լեզվամշակութային մեկնությունը հայկական ժողովրդական բանահյուսության համատեքստում, հատկապես՝ էպոսում…

Ներկայացնեմ ջրի դերը և նշանակությունը՝ իբրև համամարդկային ցուցիչ:

Ջուրը ունի կենսական դերակատարություն ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ ամբողջ ժողովրդի կյանքում:

«Հայերեն արմատական բառարանում» ջուրը դիտարկվում է որպես բնիկ հայերեն բառ, որը հայերենին է անցել հնդեվրոպական նախալեզվի yuro ձևից. այս արմատը նախալեզվում երկու ձև ուներ՝ wor և ur. . .

Ըստ Աճառյանի՝ ջուր և ծով բառերը առաջացել են նախալեզվի միևնույն բառարմատից /Աճառյան, 1979/

Փիլիսոփայական աշխարհընկալման կամ մարդկային կյանքի բնական ընթացքի համար չկա առավել կարևոր երևույթ քան ջուրն է: Հին հույն փիլիսոփա Թալես Միլեթացին առաջ է քաշել այն թեզը, որ ամեն բանի հիմքում ընկած է ջուրը :

Ջուրը կենսոլորտի կարևորագույն տարրերից մեկն է (քիմիական բանաձևը H2O): Օրգանական աշխարհի վրա այն ունի հատուկ նշանակություն. էվոլուցիոն տեսության համաձայն, կյանքը առաջացել է ջրում, և ջուր կա յուրաքանչյուր կենդանի օրգանիզմում, ուստի այն համարվում է կյանքի սկզբնաղբյուրը : Առավել ուշագրավ է ջրի հայեցակարգը հոգեբանության և ֆիզիկայի ոլորտներում: Ռուս գիտնական Կոստանդին Կորոտկովի լաբորատորիայում կատարված փորձերը հանգեցրել են հետաքրքիր արդյունքների՝ մասնավորապես այն, որ ջուրը հիշում ու տպավորում է ցանկացած ազդեցություն:

Ջրով լի անոթը տեղադրել են մի խումբ մարդկանց առջև ու խնդրել են նրանց կենտրոնացնել անոթի վրա ամենադրական հույզերը՝ սեր, քնքշանք, բարություն: Հետո

փոխել են անոթը ու նույն խմբին խնդրել են կենտրոնացնել անոթի վրա բացասական հույզեր՝ վախ, չարություն, ատելություն: Այնուհետև կատարվել են չափումներ և արդյունքում պարզվել է, որ սերը բարձրացնում է ջրի էներգետիկան, իսկ չարությունը՝ ցածրացնում . . .

Ջուրը կյանքի սկզբնաղբյուրն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Կյանքը ծագել է ջրից: Ջուր կա ամեն մի կենդանի էակի մեջ: Ջուրը, ինչպես և լույսը, կենդանի ինֆորմացիա է կրում և փոխանցում: Ջրին հնարավոր է ծրագրել: Ջրի հետ կապված ուսումնասիրությունները բերեցին նրան, որ ջուրը ունի հիշողություն, որ ջուրը լսում և հիշում է շրջակայքում կատարվածամեն բան: Ջրի վրա ամենամեծ ազդեցությունը թողնում է մարդը՝ իր էմոցիոնալ վիճակով ու ամեն մի արտասանած բառով: Սերը բարձրացնում է ջրի էներգետիկան, իսկ ագրեսիան՝ ցածրացնում: Փորձերը ցույց են տվել, որ ստրուկտուրավորված ջուր խմելուց հետո, մարդու արյան մեջ դրական փոփոխություններ են տեղի ունենում:

Նույնիսկ աղոթքներ ընթերցելով՝ մարդը փոխում է ջրի կառուցվածքը: Իր դրական ու բացասական մտքերով մարդն ազդում է բնության վրա, քանի որ բնության մեջ բոլոր օրգանիզմները ջուր են պարունակում: Ջուրը ուղեկցում է մեր կյանքի ամեն մի ակնթարթը: Մեր օրգանիզմի ջրի օրական պահանջը կազմում է 2 -3 լ:

Գլուխ 1. Ձրի նշանակությունն ու խորհուրդը բանահյուսության մեջ

Ուրախութեան ջո՛ւր առէք փրկութեան աղբիւրներից: (Եսայի 12:3)

Բանահյուսությունը արտահայտում է ժողովրդի՝ դարերով եկած իմաստությունը, հուզական և իմացական աշխարհը: Պատահական չէ, որ բանահյուսության ներկայիս միջազգայնորեն ընդունված եզրույթը՝ ֆոլկլորը, անգլերենից բառացի թարգմանած նշանակում է հենց ժողովրդական իմաստություն, իմացություն:

«Ձուր» հասկացույթը չափազանց տարողունակ է և բազմաշերտ՝ իր իմաստային կիրառություններով և լեզվամշակութային առանձնահատկություններով:

Բանահյուսության մեջ տեսնում ենք ջուրը հակադիր իմաստներով՝ կենարար և կործանարար: Հայկական լեզվամշակույթում գերակշռում է ջուրը՝ իր կենարար հատկանիշներով՝ հզորացնող, մաքրող, ուղղություն ցույց տվող, սիրող սրտեր միացնող և այլն (օրինակ՝ անգլիական լեզվամշակույթում ծովը՝ իր բազմազան ծովային գերբնական էակներով, ավելի շատ կործանարար բնույթ ունի):

Բանահյուսության մեջ ջուրը դիտվում է որպես շրջակա միջավայրի բաղկացուցիչ մաս, նրա զորավոր տարր, ինչպես նաև մարդու՝ կյանքի մղող հզոր ուժ: Լինելով ազգային մշակույթի առանցքային բաղադրիչ՝ ջուր հասկացույթը լավագույն տարբերակ է լեզվամշակույթի և ազգային դիմագծի ըմբռնման համար: Հարկ է նշել, որ ջուրը ժողովրդական բանահյուսության մեջ ներկայանում է արժեքային և հասկացական տարբեր ընկալումներով:

Բանահյուսական կենսունակ ժանրերից են առած-ասացվածքները, ինչպես նաև երգային բանահյուսությունը, մասնավորապես խաղիկները: Բանահյուսական բազմազան ժանրերից վերցրած օրիակների քննությամբ փորձենք երևան հանել «ջուր» բանաձևային կապակցության իմաստային կիրառությունները, առանձնահատկությունները և դրանց ընկալումները հայկական լեզվամտածողության համատեքստում: Ժողովրդական մտածողությունը առարկաները և երևույթները օժտում է գերբնական տարաբնույթ հատկանիշներով:

Ձուրը առհասարակ բանահյուսության բոլոր ժանրերում անմահության և երկարակեցության գերբնական ուժով է օժտված. ընդհանուր առմամբ կրում է դրական, կենարար գործառույթ: Բանահյուսության համատեքստում ջուրը համամարդկային տարողունակ և բազմարժեք ցուցիչ է, կյանքի, առատության, արգասաբերության խորհրդանիշ, անմահություն պարգևող նյութ և հանդիպում է գրեթե բոլոր ժանրերում:

Անմահական ջրով բուժում են մահամերձ հիվանդներին, վերականգնում են կույրերի տեսողությունը և երիտասարդացնում ծերերին:

Հայկական ժողովրդական բանահյուսությունում շատ հաճախ մահացու հիվանդ հերոսների միակ փրկության միջոցը համարվում է անմահական ջուրը, որի հետևից գնում են քաջսիրտ տղերքը:

Հեքիաթի օրինակ՝ «Թագավորի խեքիաթը» ժողովրդական հեքիաթում մայրը ձևանում է մահացու հիվանդ և որդուն իր փրկության համար մի քանի դարմանի ուղարկելուց հետո դևի հետ որոշում է նրան ուղարկել անմահական ջրի. -Դև՛, ճար էրա՛, - ըսեց կնիկ: -Արի ճամփա անմահական ջրի: Նույն հեքիաթի մի այլ հատվածում հանդիպում ենք անմահական ջրի ևս մեկ օրինակի, երբ դևը մոր հետ դավադրաբար հանում է տղայի աչքերը, դնում գրպանները և տանում գցում քառասուն գյազնոց փոս: Մի մարդ նրան հանում է և տանում պահում: Երկու կին, իմանալով նրա կուրության մասին, մտորում են և ասում, որ ծառի տակ անմահական ջուր կա, եթե աչքի բբերը գցեն ջուրը, լվանան և հանեն տեղը դնեն, տղան նորից կտեսնի, և այդպես էլ լինում է. անմահական ջրի զորությունը գործում է. - Քյուրո՛ ջան, իմա՞լ Փիրայմադի մեր, Փիրայմադի հաշկեր հայկական ժողովրդական բանահյուսությունում շատ հաճախ մահացու հիվանդ հերոսների միակ փրկության միջոցը համարվում է անմահական ջուրը, որի հետևից գնում են քաջսիրտ տղերքը:

Բանահյուսության մեջ հանդիպում ենք «ջուր» հասկացույթի բազմաթիվ օրինակների, առանց անմահական բաղադրիչի, բայց գործառույթը թերևս նույն է՝ բուժիչ, կազդուրիչ հատկություն ունեցող՝ հիվանդի դեղ ու դարման. «Ալաշկերտ բարձր տեղ ա, ջուրը խիվնդի դեղ ա, դնեն տեղ, կսաղնա»:

Ի տարբերություն անեծքների, որտեղ չարը և բացասականը հաճախ մարմնավորում է ծովը, հայոց մեջ տարածված ամենահայտնի օրհնանքները կապված են ջրի հետ և հիմնականում արծարծվում են երկարակեցության իմաստով.

Ձրի պես երկար կյանք ըլնես: (Թեպետ անեծք էլ կա՝ ջուրը տանի քեզ)

Առած-ասացվածք՝ ջուրն իր ճամփեն կգտնի: Ձրի օգուտն էլ ա շատ, վնասն էլ: Վազող ջուրը կեղտ չի բռնե: Ինչ աղբրից որ ջուր ես խմում, էն աղբրին քար մի գցի:

Ձրի մեկ այլ գործառույթ է սիրո խորհրդանիշ լինելը: Երգային բանահյուսության, մասնավորապես, նրա ամենաբնորոշ տեսակի՝ խաղիկների մեջ ջուրը շատ հաճախ սիրած յարի կարոտից պապակ սիրտը հովացնող միջոց է և արտահայտվում է անձավորման ոճական հնարի միջոցով. Աղջի՛, ու՞ր ես, ու՞ր ես, Ես ծարավ եմ, դու ջուր

ես: Հարսանեկան երգերում ջուրը այլաբանորեն հանդես է գալիս իբրև բարության, մաքրության և առատության խորհրդանիշ, որը հարսից խնդրում են փեսայի հայրն ու մայրը. Արի մեզի, մեռնիմ քեզի, Ձեռիդ թասով ջուր տու մեզի:

Օր՝. Ձուրը ջրին առել ա, Մատս ղալամ տարել ա. էն թուխ բեղավոր տղեն Ուշն ու միտս տարել ա: (էջ 417, Հայ բանահյուսության քրեստոմատիա, Երևան 1974)

Ես ծարավ եմ, ջուր չկա, Սարերին աղբյուր չկա Վախենամ՝ ղարիբ մեռնեմ, Վրես մեր ու քուր չգա…

Սերը և կինը միևնույն ժամանակ մարդուն ազնվացնող, վեհացնող և հերոսության մղող ուժեր են, որտեղ իր դերակատարումն ունի ջուրը. . .

Ձուր կամ գինի պիտեի, Որ ի քո սիրտդ մտնեի, Ներքև լեզվիդ անցնեի Ու ամեն տեղտըդ գիտնայի…

Բամբակ ունիմ, ծլած է, Յարն անուշ, Ձրի համար կը լացե, Բարն անուշ. . .

Ձուրը նաև հանելուկներում ՝ Օրան-օրան շուռ ա գալիս, Ոններ չունի՝ ման ա գալի, Բերան չունի՝ կուլ ա տալիս… (Ս. Հարությունյան « Հայ ժողովրդական հանելուկներ»)

ժողովրդական և հայրենասիրական երգերում, երբ խոսում են կորուսյալ հայրենիքի մասին, առավել ցավագին տանում են այն փաստը, որ իրենց հայրենիքի պաղ ու անուշ ջրերը այլևս խմում են թուրքի կըչեքն. էրեվանա հաչ(յ)եքըն, Թուրքի դըռի փաչ(յ)եքըն, Ափսո՛ս էն պաղ ջր(յ)երըն, Որ խմում են կըչ(յ)եքըն:

Հայոց մեջ ջուրը միշտ ընկալվել է իբրև հայրենի հողի անբաժան մաս, ազգային արժեք և օժտված է եղել գերբնական հատկանիշներով՝ համարվելով պաշտամունքի առարկա: Ձրի այս գործառույթը շատ հանդիպում է ժողովրդի հավատալիքներում. էն խող, էն ջուր, էն երգինք, էն գետինք. . .

Ինչպես տեսնում ենք ջուրը ժողովրդի լեզվամշակույթում կարևոր գործոններից մեկն է և բանահյուսության մեջ հանդես է գալիս իբրև անմահության, երկարակեցության և մաքրության խորհրդանիշ և հաճախ սրբացվում է:

Երազս ջրին պատմեմ, կտանի՞. . .

Գլուխ 2. Ջուրն Աստվածաշնչում

Երբ ինձ համար այս վերնագիրը «հորինեցի» որպես հետազոտական աշխատանքի վերնագիր, համաշխարհային ջրհեղեղը եկավ աչքիս առաջ.

« 40 օր և գիշեր անձրև տեղաց, երկիրը ծածկվեց ջրով. երկրի բոլոր բնակիչները կործանվեցին, և միայն տապանում պատսպարված Նոյը, նրա հարազատներն ու կենդանիները փրկվեցին աշխարհակործան ջրհեղեղից»:

Առավել հետաքրքրական է այն փաստը, որ հասկացությը շատ հաճախ ունի համապատասխանաբար դրական և բացասական գործառույթներ նաև Աստվածաշնչում: Գրեթե ողջ Աստվածաշնչում ջուրը այլաբանորեն խորհրդանշում է Քրիստոսի հանդեպ հավատքը, իսկ ծովը հաճախ մարմնավորում է անօրեն ու չար մարդկանց այլաբանական կերպարը: «Ջուր» բառը մի շարք փոխաբերական իմաստներով օգտագործվում է ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարանում որպես փրկության և հավերժական կյանքի խորհրդանիշ, որպես կենաց ջուր, որը Աստված առաջարկում է մարդկությանը՝ իր որդու հանդեպ հավատքի միջոցով. Ուրախութեան ջո՜ւր առեք փրկութեան աղբիւրներից: Հոգին եւ Փեսան, որ գալու եմ»: Եւ ով լսում է, թող ասի՝ ե՜կ: Եվ թող գայ, ով ծարաւ է. նաև՝ ով ուզում է առնել կենաց ջուրը՝ ձրի»: Զրհորի մոտ սամարացի կնոջ հետ Հիսուսի երկխոսության մեջ նա այլաբանորեն է խոսում իր փրկության մասին որպես «կենդանի ջուր» և որպես « բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» Յիսուս նրան պատասխանեց և ասաց. «Եթե դու գիտենայի՛ր Աստծու պարգեւները, և թե ով է, որ քեզ ասում է՝ «Ինձ խմելու ջուր տուր», գուցե ինքդ արդարև նրանից կ» ուզեիր, և նա քեզ կենդանի ջուր կը տար»:

Այո՜, ջուրը իմաստուն է, ազնիվ, շիտակ ճանապարհ ցույց տվող, զորեղացնող, մաքրագործող, բայց միևնույն ժամանակ՝ դաժան ու կործանարար. . .

Գլուխ 3. Ձրի սիմվոլիկան, խորհուրդը էպոսում

Անտիկ առասպելաբանության կերպարները և իրենց ծննդյամբ սրանց հարող մի շարք հեքիաթներ, իրանական հերոսական էպոսի դիպվածներ հենց առաջին տպավորությամբ համադրվում են հայկական ժողովրդական էպոսի այս կամ այն կերպարներին, որոնք ընդհանուր են առհասարակ բոլոր ժողովուրդներին՝ նրանց մտքի զարգացման որոշ էտապում, բնության ուժերի և կյանքի երևույթների մասին նրանց ունեցած պատկերացումների որոշ աստիճանում:Տարբեր պատմական և աշխարհագրական պայմաններն այս կամ այն ժողովրդի միջավայրում միևնույն առասպելին իրենց ուրույն, յուրատեսակ տեղական գունավորումն են տալիս…

Ո՞րն է ջրի զորությունը էպոսում և ինչ կիրառական նշանակություն ունի ջրի մասին իմանալը մեր օրերում: Վիշապների, դևերի համար ջրի կարևորությունը, նշանակությունը խիստ մեծ է (մենք ունենք վիշապակոթողներ):

«Սասունցի Դավիթ» էպոսում առաջին տեղերից մեկն է բռնում հրաշագործ ջուրը: Այս ջուրն Ապոլլոնին նվիրված Կաստալյան աղբյուրը չէ, որը պոետներին ոգևորություն էր ներշնչում, ոչ էլ մշտենջանական պատանեկության այն աղբյուրը, որ երդվում է մի շարք եվրոպական ժողովուրդների լեգենդների մեջ. սա ռուսական հեքիաթների «կենդանի ջրի» աղբյուրը չէ. այն աղբյուրը, որի ջրով պետք է սրսկել սպանված հերոսին՝ նրան կենդանություն տալու համար: Հայկական էպոսում ջուրը հանդիսանում է այն հիմնական տարերքը, որ հերոսներին գերմարդկային ուժ է շնորհում , իսկ երբեմն էլ նրանց ծնողը, նրանց կյանքի աղբյուրն է հանդիսանում:

Ձրին են պարտական իրենց ծագմամբ Սանասար և Բաղդասար երկվորյակները, որոնց հղացավ Ծովինար կույսը՝ խմելով «անմահական աղբյուրի» ջուրը: Հրաշագործ առվակի մոտ են գալիս երկվորյակներն իրենց թափառումների ժամանակ և իմաստուն Սանասարը գիտե, որ սա «ազնանցորդու ջուր է, ով որ էդոր ական ջուր խմե, էդպես կտրիճ կըլնի»: Սանասարը ծովի հատակին «աղբրի ջուր խմեց, քնեց. . և միանգամից ջոջացավ, զորացավ, կտրճացավ, լցվավ, դարձավ հրեղեն…»

Մեծ Միհրի կյանքում էլ այս աղբյուրը, ինչպես երևում է, որոշ նշանակություն է ունեցել, քանի որ Դավթին խրատող իր տատիկը՝ Դեղձունը, ուղարկում է նրան « Միհրի Կաթնաղբյուրի» մոտ (թե ինչու է Կաթնաղբյուր, էպոսում չի պարզվում), որպեսզի նրանից ջուր խմի: Այս աղբյուրի առաջ ծունկ է չոքում ձին ՝ Քուռկիկ Ձալալին, որը Դավթին ուղի է ցույց տալիս և որի բանավոր ցուցումով պատանին սրսկում է ձիուն այդ

ջրով և բուժում նրա վերքերը, որ ինքն էր հասցրել նրան իր անզուսպ զայրույթի պահին, երբ ձին կանգ էր առել «Միերի Կաթնաղբյուրի» մոտ:

Դեղձունի՝ Միերի մոր ցուցումով Դավիթն այն ջրից խմելով և նրանով լվացվելով՝ քնում և (ինչպես Սանասարը ծովի հատակին), որպեսզի զարթնելուց հետո զգա, որ նա «հզորացե, իր հոր հագուստ հագիվ կգա վերան», այսինքն՝ Դավիթն իր ուժով ավելի հզոր է դառնում, քան իր հայրը. ինչպես և հորից ավելի ուժեղ է դառնում Փոքր Միերը, որին Դավիթը չի կարողանում հաղթել մենամարտի ժամանակ:

Հնարավոր է, որ եղել է էպոսի մի այլ տարբերակ ևս , որը մեզ չի հասել և որի համաձայն Փոքր Միերն էլ այդ աղբյուրի ջրից խմել է:

«Կաթնաղբյուր» են անվանել նրան ասացողները՝ ելնելով լայնորեն տարածված «կաթնե գետեր» հեքիաթային կերպարից, որպես հարստության և առատության մի խորհրդանշանի, որն իր հերթին հանգում է նախնական մարդու այն պատկերացմանը, թե մարդուն և կենդանուն աճեցնող և ուժ տվողը կաթն է: Իսկ կաթը հայերի պատկերացմամբ առանձնապես կարևոր նշանակություն ունի թե՞ կաթնեղբայրների մեջ արենակցականից ավելի սերտ կապեր ստեղծելու համար և թե՞ ծիծ կերածի ստնտուի միջև կապեր ստեղծելու համար, մինչև իսկ այն դեպքում , երբ ստնտուն իսկական կաթնատու մայրը չէ (օրինակ, երբ հեքիաթի հերոսն անվտանգ է դարձնում կախարդին և նրա օգնությունն է կարողանում ձեռք բերել):

Դեռ այժմ էլ հայաստանի շատ վայրերում «կաթնյա» են անվանվում խիստ փրփրող և, հետևաբար, սպիտակ ջրի տպավորություն գործող աղբյուրները, ինչպես և այն աղբյուրները, որոնց ջուրը լավորակ (երբեմն էլ բուժիչ) աղեր է պարունակում. ինչպես օրինակ, Բյուրականից Ամբերդ տանող ճանապարհի վրա՝ Ինակլու գյուղում գտնվող աղբյուրը, որի սպիտակավուն ջուրը կաթի տեսք ունի:

«Սասունցի Դավթի» մեջ արտահայտություն է գտել նաև Արևելքի այլ ժողովուրդների մեջ եղած պատկերացումն այն չար ուժերի մասին, որոնք կտրում են ջրի առջևը՝ տեղ բռնելով սարերում , ջրի ակունքի մոտ:Ֆեոդալական Հայաստանի պայմաններում այս պատկերացումը կարող էր պահպանվել ժողովրդի հիշողության մեջ՝ ամենուրեք դիտվող այն երևույթի շնորհիվ, որ ֆեոդալների դղյակները կառուցվում էին գլխավորապես այն վայրերում, այնպիսի լեռների կատարների, լանջերի և ժայռերի վրա, որոնց տիրապետելով, ապահովում էր ջրի պաշտպանությունը:

Ըստ երևույթին հենց սրանով էլ բացատրվում է այն փաստը, որ էպոսում Սպիտակ Դևը, որը կտրել էր ջրի ընթացքը և կորստյան էր մատնում ժողովրդին, Խլաթի թագավոր է

անվանված: Մյուս կողմից հայտնի է, որ զոհաբերական աղոթքները և արձանային պատկերումները նվիրվում էին ոչ միայն բնության բարի ուժերին, այլև չարերին, որպեսզի արժանանային նրանց ողորմածությանը և հետ կասեցնեին նրանց վնասաբեր հմայքները: Այս դեպքում քարե վիշապների կերտվածքները ջրերի ակունքների մոտ չե՞ն հանդիսանում արդյոք, ոչ թե ոռոգման համակարգի պաշտամունքի առարկա դարձած հովանավորողների պատկերացումներ, այլ յուր տեսակի մի ապոտրոպեոն, որը հենց իր ներկայությամբ հետ է կասեցնում չարիքը ջրի ակունքների մոտ, որը պետք է խանգարի այլ չար ուժերին (ինչպես սպիտակ Դևն է կամ Կանաչ քաղաքի վիշապը), պառկելու ջրի ակունքին և սպառնալիքի տակ դնելու ոռոգումը:

Չպե՞տք է արդյոք այս դեպքում վիշապների արձանային պատկերումների մեջ դիտել ավելի ուշ մի շրջանի արտացոլումը, քան այն, երբ վիշապները պատկերացվում էին որպես բարի աստվածներ:

Չէ՞ որ , օրինակ, դրակոնը Չինաստանում, նախապես հանդիսանալով ջրի բարի աստվածություն, հետագայում դառնում է կառավարման մի խորհրդանշան, կայսերական իշխանության խորհրդանշան և պատկերվում է կայսերական պետնիշի վրա, ինչպես նաև պատկերվում էր Սասանյանների թագավորական դրոշի վրա:

Չէ՞ որ վեցերորդ դարի պահլավական պատմական վեպը Արտաշիր Պապականի արարքների վերաբերյալ (Կարնամակ) նույնպես պատմում է թագավորի մասին, որը հանդես է գալիս Խաֆտանբոխտա դրակոնի կերպարանքով, որի հետ կռվում է Արտաշիրը, և որն, անկասկած, հանդիսանում է ոչ այլ ոք, քան վերջին Արշակունի Արտավան հինգերորդը. այլ խոսքով՝ այստեղ մենք պատմական իրադրության մեջ տեսնում ենք Սպիտակ Դևի՝ Խլաթի թագավորի եպիկական կերպարի կրկնությունը:

Նման երևույթներ հայտինի են նաև արևմտյան ժողովուրդների ավանդություններից . սրանց մոտ էլ դրակոնը թագավոր է դառնում, ի բաց չառյալ, գուցե նաև կիսաառասպելական այն դրակոնը, որի անունը կապված է Հունաստանի առաջին օրենսդրական ակտերի հետ:

Վերադառնանք հայկական էպոսին:

Այսպես ուրեմն, հայկական էպոսի բոլոր հերոսները, սկսած նախապապ Սանասարից, իրենց ծագումով պարտական են ջրին. բոլոր չորսի համար էլ ջուրն է հանդիսանում այն հարազատ տարերքը, որից նրանք իրենց գերմարդկային հզորությունն են ստանում:

Հունական առասպելաբանության մեջ տիտանները, նույնպես գերմարդկային ուժով օժտված էակներ, դարձյալ տարերքներից մեկի՝ Դայա աստվածուհու կերպարի մեջ երևան եկող՝ հողի զավակներն են հանդիսանում: Նրանցից մեկին՝ Աթեոսին, ինչպես հայտնի է, Հերակլեսը չկարողացավ հաղթահարել, որովհետև տիտանը ամեն անգամ հողին՝ իր ծնողին կպչելիս նոր ուժ էր ստանում կռվի համար, և Հերակլեսը նրան հաղթահարել կարողացավ միայն այն ժամանակ, երբ գետնից կտրեց նրան և օդի մեջ բարձրացրեց:Հունաստանի նման մի երկրի պայմաններում, և որը հարուստ էր կղզիներով, և որի ափերը կտրտված են ծովի կողմից, հարուստ է ջրով, բայց աղքատ է մարդուն հաց և անասունին խոտ մատակարարող հողով, տիտանի համար հիմնական և հարազատ տարերք է հանդիսանում հողը, որը և նրա ծնողն է:

Մի երկրում, որը ջրով աղքատ է, որտեղ ջրի լինել-չլինելուց է կախված հացի լինել- չլինելը, անասունների համար արոտատեղերի լինել-չլինելը, այդպիսի երկրում, որպիսին Հայաստանն է, տիտանների համար հիմնական և հարազատ տարերք է հանդիսանում ջուրը, որը և նրանց ծնողն է:

Հունաստանում տիտաններին ծնում և բարի հողը (միայն ավելի ուշ) . Հայաստանում՝ նրա տիտանական հերոսներին ծնում է բարի ջուրը , ըստ որում, մոր խմած բեղմնավոր ջրի քանակը (մի լիքը բուռ և մեկ էլ՝ կիսատ) որոշում է հերոսների հետագա բախտը:

Նրանցից Սանասարը ծնվում է լիակատար և լիարժեք, իսկ Բաղդասարը՝ ոչ լիակատար, այսինքն՝ այն, ինչ որ իրական կյանքում համապատասխանում է լիակատար և թերի ջրոռոգման հետևանքներին:

Միչուլինը իր «Անթեոսի առասպելը հին հեղինակների մոտ» հոդվածում նշում է այն խնդիրները, որոնք դրված են Անթեոսի կերպարն ուսումնասիրողների առջև: Այդ խնդիրներից մեկն անվիճելիորեն ունի մեծ հետաքրքրություն. այն է, պարզել, թե ինչպես է կերպարանավորվում Անթեոսը ԽՍՀՄ ժողովուրդների մոտ՝ « հողի զավակի» մասին նրանց ունեցած առասպելական պատկերացումների մեջ: Հայ ժողովրդի երգած հերոսները, ջրի զավակները, մասնակի կերպով պատասխանում են այդ հարցին:

Հայկական էպոսի չորս հերոսների կերպարների , ինչպես և Անթեոսի կերպարի մեջ մարմնավորված ենք տեսնում այն ուժի պատկերացումը, որ շնորհում է հարազատ տարերքը, եթե նրա հետ անխզելի կապ է պահպանվում:

Մեր դարում մարդն իրեն է ենթարկում և՛ հողը, և՛ ջուրը, որոնց ամբողջովին ենթարկվում էին Հելլադայի և հին Հայաստանի հերոսները. . .

Հարազատ տարերքի հետ ունեցած կապի ուժը, որը պահպանվում և բազմապատկում է հերոսի՝ այդ տարերքի զավակի հզորությունը, կերպարանավորել են և ավանդ թողել մեզ Հելլադայի հին առասպելաբանները Անթեոսի ամենազեղեցիկ և անմեռ կերպարի մեջ, և Հայաստանի առասպելաբաններն ու ասացողները, որոնք մեզ են հասցրել Սասնա հերոսների կենսալի քառամիասնական կերպարը:

Մեր օրերում մարդկության պայքարի ժամանակահատվածում օրեցօր ավելի ու ավելի ցայտուն և պարզ է դառնում մեր ունեցած ժառանգության պահպանումը, կարևորումն ու արժևորումը:

Ձուրը, ջրի նշանակությունը, զորությունը էպոսում և կարևորությունը:

Եթե Խորենացու «Հայոց պատմությունը» հայ ժողովրդի անձնագիրն է, ապա «Սասունցի Դավիթ » էպոսը մեր ժողովրսի ծննդյան վկայականն է. . . Ազգային ինքնության, ազգային գիտակցության կարևորագույն դրսևորում է էպոսը: Ծանր ժամանակներում հայտնված ազգերը ապավինել են իրենց էպոսին: Էպոսն է օգնել վերելքի ճանապարհներ բռնել. այն մեր պետականության մոդելն է, որը մեզ ուղղորդել է, թեպետ հաճախ նաև մոռացության ենք մատնել. . . Խոսել «Սասունցի Դավիթ» էպոսի մասին, նշանակում է բանահյուսական բոլոր ժանրերի հետ առնչվել:

1885 թվականին Աբեղյանը ՝ հայագիտության ռահվիրան, Շուշիում կարդացել է մեր էպոսի «Մոկաց պատմություն» -ը, որից էլ ոգեշնչվելով՝ մեծանուն մարդիկ հավաքվել են, սկսել կարդալ և մեկնել էպոսը:

Օրինակ՝ Մակեդոնացին պաշտում էր «Իլիականը» . պահում էր բարձի տակ և գիտեր անգիր: Հուլիոս կեսարը մի մարտի ժամանակ նետերի տարափի տակ սուզվել է գետը, բայց ձեռքից բաց չի թողել իր հուշատետրը, որի մեջ իր գրառումներն էին էպոսից:

1800-ականներին Իտալիան, Գերմանիան սկսում են հիշել, զբաղվել իրենց էպոսով, հեքիաթներով. . .

9-10-րդ դարում մենք էլ հաղթանակ տարանք արաբների դեմ՝ ոգեշնչվելով մեր ազգային էպոսով . . .

էպոսում ջուրը կյանքի և ուժի աղբյուր է, որովհետև, երբ Ծովինարը խմեց ջուրը, հղիացավ և ծնվեցին Սանասարն ու Բաղդասարը: Ձուրը կյանք տվեց:

Սանասարը, երբ սուզվեց ջրի տակ, ջուրը նրան գերբնական ուժ տվեց, դարձրեց մի այնպիսի հսկա, որ Բաղդասարը նրան տեսավ, չճանաչեց: Բոլոր սասնա քաջերն էլ կառուցող, արարող շինարարներ են:

Մեծ Միերը Մարութա վանք է կառուցում , իսկ Սանասարն ու Բաղդասարը՝ ամրոց. դա պետականության սիմվոլն է:

Լույսը , որ տեսնում է Դավիթը, իր նախնիների հետ կապն էր: Դավիթը դարձավ իր հոր արժանի հետնորդը:

Առյուծը հզորության և քաջության սիմվոլն է:

Դիցաբանության մեջ ձին հանդես է գալիս որպես աստվածների կամքի ներկայացուցիչ:

Ձին հին հայերի մոտ խորհրդանշում էր ուրարտական արևի Աստծուն՝ Շիվինին: Հայերն այդ Աստծուն ձիեր էին զոհաբերում: Սանասարը և Բաղդասարը կարող են համարվել «կրակոտ ձիու» արևի խորհրդանիշ որդիներ:

Կայծակը դիցաբանության մեջ երկիմաստ խորհրդանիշ է՝ ստեղծարար և ավերիչ:

Ծովինարը բարբառներում նշանակում է «կայծակ»: Նա ներկայացված է որպես կայծակի աստվածուհի, կին, որն ունի կրակոտ աչքեր: Հին ժամանակներում ցուլը համարվում էր սուրբ կենդանի և դիտվում էր որպես հզոր և ահեղ ուժ, ինչպես նաև թագավորական իշխանության խորհրդանիշ է:

Եզրակացություն

«Առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի» : Սաադի
«Որպեսզի աշակերտը լավ սովորի, անհրաժեշտ է, որ նա հոժարակամ սովորի»: Տոլստոյ

Այո՛, հետազոտությունները ցույց են տալիս, որ ծանր ժամանակներում հայտնված ազգերը ապավինել են իրենց էպոսին. այնտեղից սերտում էին այն ուժը, ոգեղենությունը , որն անհրաժեշտ էր պետական գործիչներին:

Գարեգին Նժդեհն էլ ասում է. «Հայերի խնդիրն այն է, որ իրենք իրենց չեն ճանաչում, չգիտեն իրենց պատմությունը, չգիտեն իրենց փառահեղ դյուցազնականը . եթե ճանաչեին, եթե իմանային, հասկանային, այլ վիճակում կլինեին. . . »

էպոսը մեր ինքնության 9 սյուներից մեկն է. հայ մարդու՝ Թումանյանի համար համարվում էր այն Կաթնաղբյուրի ջուրը, որից խմելով, որի կողքը կանգնելով, որում լողալով՝ Դավիթը ստացավ իր ղվաթը, իր ուժը. այնպիսի ուժ, որ Միհրի հագուստն անգամ Դավթի վրա հազիվ կգար, ավելին դարձավ, քան առյուծի դեմ մենամարտող Միհրն էր:

Ցավոք սրտի, դպրոցական ծրագրերից կարծես թե դուրս է մղվում էպոսը (ավագ դպրոց), ուստի գերնպատակս է հիմնական դպրոցում առավելագույնս ներկայացնել էպոսի կարևորությունը. բացահայտել էպոսի թաքնագիտական շերտերը, անդրադառնալ հատկապես ջրի խորհրդին, դերին, նշանակությանը. կարևորել, արժևորել ինքնճանաչողությունը, գիտակցել օրվա, դարի հրամայականը՝ ամուր պահել այն ամենը, ինչ քոնն է. (եթե անգամ ծնկել ես, ուժ գտնել, նորեն ամուր կանգնել հողիդ վրա՝ արմատներովդ կառչելով խորքիցդ. . .)

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան

2. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 14 ,Երևան, 1983:

3. Հայ ժողովրդական երգեր և նվագներ

4. Հայ բանահյուսության քրեստոմատիա, Երևան 1974

5. Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Երևան 1989

6. Հայկական էպոսի ջրային անթեոսը /Կ. Վ. Տրևեր/

7. https://www.slideshare.net/JannaSar/ss-29084508